զխաչս ի / տապանի ո/րդւոյ / իմոյ / Մնպա տա (s!). որք երկ/բպագէ/ք յաղաւթս յիշեցէք *.

Յերկրորդ արձանագրութիւնն է.

Թուական ՈՀԳ էր. Ես Ջաջուռ կանգնեցի զխաչս ի տապանի որդւոյ իմոյ Հասանայ (կորած է խաչը)։

Մի յերրորդ արձանագրութիւն Ջաջուռի անվան հիշատակութեամբ գտնվում է Գանձասարից դեպի արևելք՝ Ծմակա հողի ճանապարհի վերա, հնում Վաճառք կոչված տեղի յեկեղեցու դրան հարավային կողմը, արևմտյան պատին **։

Հրամանաւ ածասէր իշխանին Հասանա տեառն Խաչենոյ ես Գրիգոր որդի քաջ զաւրականին Ջաջուռա ետու զԱւանախոսին երկիրն ի սուրբ Նահատակս տր սեւ միաբանքս տուին զսբ Գրիգորի տաւնն։ Բ։ պատարագ.

Ջաջուռը, յիրավի, զորական էր, նա յուր յեղբոր Վասակ Խաղբակյանի «զինակիցն» էր պատերազմների մեջ, ինչպես տեսանք Կեչառոյքում Վասակի շինած կաթուղիկեի հարավային պատի մեծ արձանագրության մեջ (Պատկ. 4. Հավել. Ա. 4)։

Վանենու մի ուրիշ յերկաթագիր մագաղաթյա, մեծադիր ավետարանի հիշատակարանից, գրված 1224 թվին, իմանում ենք, վոր նա ամուսնացած էր Սեաղյանց Աբասի վորդի Կուկ իշխանի հետ. «Ես Վանէնի աղախին Քի դուստր Ջաջոյ Խաղբակեանց, ամուսին Կուկին որդւոյ Աբասա Սեաղեանց, իշխանածեանցն, միաբանեցա ի Խորանաշատոյ սբ Աստծինս», տալով նվեր այս փառավոր ավետարանը. «շինող եւ առաջնորդ վանիցս Վանական վարդապետն հաստատեաց ինձ աւուր մահուան իմոյ։ Ա։ քառասունք, Ը. աւր ամբիծք, և յամէն տարի։ Ա։ աւր ժամ յիշատակ ինձ յինանցն, յաւուր տաւնի Աւետեաց Աստծնին» *. (տես Հավել. Բ. 4)։

Տարաբաղդաբար պարզ գաղափար չունինք Խաղբակյանց ընագավառի տարածության մասին Խաչենում. այսքանս միայն գիտենք, վոր Հավապտուկը նրանց հոգևոր կեդրոնն էր և տոհմական գերեզմանատունը, իսկ Գեռաքարը նրանց բնակավայրը։ Սակայն անհավանական չէ, վոր ավելի ընդարձակ լիներ այն, մանավանդ յեթե իրական լինի Դլենյանց և Խաղբակյանց տոհմակցությունը. Մեծարանց վանքի, բայց հատկապես Կոշիկ անապատի բոլոր արձանագրությունների հաւաքելն ու ուսումնասիրությունը, գուցե, կարող էր վոր և է լույս սփռել այս մութ հարցի վերա։ Բարխուդարյան և Որբելի իրենց վերոյիշյալ աշխատություններում չեն տվել բոլոր արձանագրությունները, իսկ մենք հնարավորություն չենք ունեցել այդ մասերն անձամբ ուսումնասիրելու. Քոլատակի հովիտը այս վանքերի և Հավապտկի հետ մի փոքրիկ ամբողջություն է կազմում։

---

* Համ. Արցախ. 182.

** Գրի յենք առել 1897 թ. նաև հետևյալ արձանագրությունները.

Ա. յեկեղեցու ներսը. Ցանուն այ ես Ասրդս (?) եկի միաբանեցա սբ Ըստեփանոս /ն լբ տալ (տուի?) կ(?)ով վասն իմ մեղացն թողութն (s!) առաջնորդութե Գրիգորի . . . (մի բառ) միաբան . . . (մի բառ) տվին Բ (?)։ ժամ սբ Սարգսին . . .

Բ) Խորանի հյուսիսային պատին. Շնորհիւն այ ես Հասան որդի (Վ)ախ(տանգ) եւ Խորիշահի տէր Խաչենոյ շինեցի զեկեղեցիս յորժամ յայտնեցաւ նշխարք սրբոյն Ստեփանոսի ի սոյն տեղո(ջ) ի թո ՈՀԸ եւ խնդ(ութ)ցի ի սպ սաւորաց .....։

Գ) Բեմի առաջից մի արձանագրություն և գունավոր զարդեր, բայց չի կարդացվում։

Դ) Հարավային մատրան դրան հյուսիսակողմը. Ես Պապաք որ? է (որդի?) Խութլա .. ա տուաք զԳոխին երկիրն ի սբ նահատակս տր ս եւ միաբանքս տուին։ Ա։ ժամ Դաւթի տաւնին Աղբայրա կատարիչքն աւրհնին.

Ե) Արևմտյան վորմի վերա. Կամաւն այ ես Սարգիս Կարնու քաղաքեցի սալեցի զեկեղեցիս եւ կանգնեցի զխաչերս ինձ եւ աշակերտ s! իմո Յովաննիսի յաղաւ .. ։ Համ. Արցախ. 184—185։

* Այս ավետարանի մասին առաջին անգամ հիշատակություն է անում Սրուանձտյանց (Թորոս Աղբար. Բ.272). եղել է սեպհականություն Վանի ս. Վարդան յեկեղեցու։ Այժմ գտնվում է Մ. Աթոռում, վոր նվեր է բերված 1915 թ. Վանի գավառապետ Տերմենի կողմից, № 994։ Ավետարանի կազմը կաշեպատ է, հաստ տախտակի վրա, 36×26×12 սմ. մեծությամբ. հաստ մագաղաթ 36×26 սմ., մեծ, բոլորաձև երկաթագրով, յերկսյուն, յուրաքանչյուրը 24½×7 սմ։։ Գրված է Խորանաշատում «ի ժամանակս թագաւորութեան դստեր Թամարին, թոռին Գէորգեայ, եւ ի տէրութեան այրարատեան նահանգին եւ Խաչենոյ մինչ ի կողմանս Զարեբին. յայսմ ժամանակի ինքնակալ տանս Ռանա Վահրամ եւ Աստդ եղբայր իւր, ի հայրապետութեան տն Յովաննիսի, ի ՈՀԴ թվականիս»։ Ավետարանը նկարազարդ է, տասն խորաններով, ավետարանիչների պատկերներով և սկզբնազարդերով, մանրանկարչական տառերով և լուսանցքի զարդերով։ Թույլ են ավետարանիչների պատկերները և շատ պարզ. իսկ սկզբնազարդերը, լուսանցքի զարդերը ավելի հաջող և արևելյան բնույթով։ Բացի ավետարանի ծագման հիշատակարանից կան և ուրիշները. հիշատակելի է հատկապես Խորանաշատի հիմնադիր և նշանավոր վարժապետ ու մատենագիր Վանականի ձեռքով գրված հիշատակարանը Մարկոսի վերջում, 155ա։ Հիշատակարանը տես Հավել. Բ, 4։